ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 673-Ա 12 նոյեմբերի 2026 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 60-րդ կետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջներն, ինչպես նաև Գագիկ Հովհաննիսյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճափի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Գագիկ Հովհաննիսյանին տրամադրել 2025-2026 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ 2026 թվականի նոյեմբերի 17-ից 2026 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ (10 աշխատանքային օր):

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճափի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Գագիկ Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների և պարտականությունների կատարումը վերապահել

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճափի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Մովսիսյանին (առանց վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

12.11.2026

ՎԱՀԱՆ ՉԱՐՈՅԱՆ

Подписано: ZAROYAN VAHAN 3103860463

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Վ. ՉԱՐՈՅԱՆ
ք. Գավառ